

ԱՌԻՆ-ԹՐԱՄՓ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

Խիստ հազուադիւր եւ պատմական իրադարձութեամբ, հանրապետութեան Նախագահ Ժոզէֆ Անուն Սպիտակ տան մէջ Նախանցեալ օր տեսակցեցաւ իր ամերիկացի պաշտօնակից Տոնըլտ Թրամփի հետ: Անոնք քննարկեցին երկկողմանի կապերը, Լիբանանին աջակցելու միջոցները, Իսրայէլի հետ հակամարտութիւնը եւ խաղաղութիւն ու կայունութիւն հաստատելու ուղեգիծը: Թրամփ տեղեկացուց, որ իսրայելացիները սկսած են քաշուիլ լիբանանեան հողերէն: Ան յայտնեց, որ վարչակազմին յանձնարարած է արտօնել, որ ամերիկեան օդանաւային ընկերութիւնները սկսին ուղիղ թռիչքներ կատարել դէպի Պէյրուս: «Մենք պատրաստ ենք շատ օգնելու Լիբանանին եւ գուցէ նոյնիսկ խօսինք



Հրճպալլային հետ, եթէ Աուն պահանջէ այր», ըսաւ Թրամփ: Նախագահ Աուն նշեց, որ Թրամփ եւ ինք կը բաժնեն նոյն տեսլականը, աւելցնելով որ բանակցութիւններուն վերջնական նպատակն է վերջ տալ Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ թշնամութեան:

Աուն այցելեց Նաեւ Ուաշինկթընի մէջ Լիբանանի դեսպալնաւուն, ուրկէ յայտնեց, որ կարելի է իրագործել Հրճպալլայի ապագինումը, եթէ միջազգային կողմերը գործադրեն իրենց խոստումները՝ ապահովեն իսրայէլեան ուժերու Նահանջը, զօրակցին լիբանանեան բանակին եւ աշակցին քանդուած շրջանները վերակառուցելու ջանքերուն: Թրամփի հետ Աունի տեսակցութենէն ժամեր անց, Իտալիոյ Արտաքին գործերու Նախարարութիւնը յայտարարեց, թէ Յուն 4 Օգոստոսին պիտի հիւրընկալէ Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ բանակցային հերթական նիստը: Իսկ Միացեալ Նահանգներու արտաքին գործերու Նախարար Մարքո Ռուպիօ նշեց, որ Հրճպալլա վտանգ կը սպառնայ Սուրիոյ կառավարութեան, անոր թշնամին է եւ կը փորձէ խափանել անոր աշխատանքները:

ՏԵՂԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրի շէտեց, որ Թրամփի հետ Աունի տեսակցութեան արդիւնքը պէտք է



ըլլայ Լիբանանի մէջ զինադադարի գործադրութիւնն ու իսրայէլեան Նահանջը, ցաւ յայտնելով, որ այդ տակաւին է

ՆԱԻՌԻ ԴԻՄԱՅ ԵՆԹԱԿԱՌՈՅՅ

Իրանի դէմ պատերազմը Միացեալ Նահանգներուն համար ցարդ արժած է 37,5 միլիառ տոլար: Այդ մասին յայտնեց պաշտպանութեան Նախարարը, թէեւ մասնագետները վստահ են, որ վերջնական թիւը շատ աւելի բարձր



պիտի ըլլայ: Միացեալ Նահանգներու Նախագահ Տոնըլտ Թրամփ երեկ զգուշացուց, թէ Հորմուզէն անցնելու ատեն

կատարուած: Իսկ վարչապետ Նաուաֆ Սալամ շնորհակալութիւն յայտնեց Թրամփին՝ Պէյրուսի հետ օդային ուղղակի թռիչքներ իրականացնելու կանաչ լոյս տալուն համար, շէշտելով որ կառավարութիւնը պատրաստ է այդ ծրագրի գործադրութեան: Սալամ պաշտպանութեան Նախարարին ու բանակին հետ այցելեց Արեւմտեան Չաուբար, բարձրացուց լիբանանեան դրօշը եւ յայտնեց, որ կառավարութիւնն ու բանակը իսրայէլեան Նահանջին զուգահեռ պիտի սկսին ծառայութիւններ մատուցել քաղաքացիներուն:

ԲԱՆԱԿԸ ԱՐԵՄՏԵԱՆ ՉԱՌԹԱՐԻ ՄԵՃ

Հարաւի մէջ գործադրութեան դրուեցաւ բռնագրաւեալ որոշ շրջաններէ իսրայէլեան Նահանջի ծրագիրը: Իսրայէլեան ուժերը առաջինը դուրս եկան Արեւմտեան Չաուբար



գիւղէն, ուր տեղակայուեցան լիբանանեան բանակի զինուորները եւ սկսան անմիջապէս մաքրագործել պատերազմական գործողութիւններու ականատես դարձած թաղամասերը՝ վերաբնալ ճամբաները, վերացնել չպայթած ռումբերը եւ ականները: Բանակը ահազանգեց, թէ մերձակայ գիւղերուն մէջ դիրքաւորուած իսրայէլեան ուժերը կրակ բացած են լիբանանցի զինուորներու տեղակայումի վայրերուն մօտ, վտանգելով անոնց կեանքը: Բանակը շէշտեց, թէ որեւէ տարակարծութիւն լուծելու համար անհրաժեշտ է կրակ բանալու փոխարէն դիմել միջազգային համակարգող յանձնախումբին: Նոյն շրջանին մէջ, Կարմիր խաչի ինքնաշարժներէն մէկը պայթեցաւ ականի վրայ, որուն հետեւանքով վիրաւորուեցան չորս փրկարարներ:



Այսուհանդերձ, հարաւի մէջ տակաւին չեն դադրած իսրայէլեան ռազմական գործողութիւնները: Իսրայէլեան ուժերը երեկ պայթումներ կատարեցին Նապաթի գաւառի շարք մը շրջաններու մէջ, ինչպէս Նաեւ յառաջացան Շաքրա գիւղին ուղղութեամբ, ուր իսրայէլեան դրօշը բարձրացուցին Տուպիէ բերդին վրայ: Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց, թէ 2 Մարտին սկսած իսրայէլեան ոտնձգութիւններուն հետեւանքով մինչեւ 22 Յուլիս մահացած է 4328 մարդ, վիրաւորուած՝ 12.232 ուրիշներ:

ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՃՆՇՈՒՄՆԵՐ

Հայաստանի մէջ Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէն յայտարարեց, թէ 2026-ի երկրորդ եռամսեակի ընթացքին զրանցուած է լրագրողներու եւ լրատուամիջոցներու իրաւունքներու 48 խախտում ներառեալ ֆիզիքական բռնութիւն, տեղեկութիւններ ստանալու եւ տարածելու իրաւունքի խախտում եւ այլ տարատեսակ այլ ճնշումներ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԿԱԶՄԸ ՊԱՏՐԱՍ Է

Հայաստանի մէջ 7 Յունիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւնները անցած են ազատ, արդար եւ թափանցիկ մթնոլորտի մէջ: Այդ մասին մամլոյ ասուլիսի ընթացքին վտահեցուց Կեդրոնական ընտրական յանձնաժողովի Նախագահ Կահազն Յովակիմեան: Ան նշեց, որ թերութիւնները անհամեմատ քիչ եղած են եւ «այս լաւագոյն ընտրութիւնն էր բոլոր տեսանկիւններէն»: Յովակիմեան



երեկ իրապարակեց Հայաստանի Հանրապետութեան 9-րդ գումարումի Ազգային ժողովի երեսփոխաններուն ամբողջական կազմը, որուն մաս կը կազմեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան 64 երեսփոխաններ, «Ուժեղ Հայաստան» դաշինքէն 29 եւ «Հայաստան» դաշինքէն 12 երեսփոխաններ:

Դատական հետապնդումներու ծիրին մէջ, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեան ձեռնաշղթաներով վերստին փոխադրուեցաւ Քննչական կոմիտէ, ուր աւելի քան 10 ժամ շարունակ հարցաքննուեցաւ եւ առեւտուեցաւ իր թղթածրարին հետ առնչուած իրանցիի մը հետ: Կեդրոնական ընտրական յանձնաժողովը բաւարարած է «Ուժեղ Հայաստան» խմբակցութեան ղեկավար Նարեկ Կարապետեանի նկատմամբ քրեական հետապնդում յարուցելուն համաձայնութիւն տալու վերաբերեալ՝ ՀՀ Գլխաւոր դատախազութեան միջնորդութիւնը:

ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՓԱՍՏԱՑԻ ՄԱՐՏԱԾ Է

Ատրպէյճանի Նախագահ Իլիամ Ալիեւ յայտնեց, որ Ատրպէյճանէն մատակարարուող վառելանիւթի զգալի դեր կ'ունենայ Հայաստանի ուժանիւթային անվտանգութեան պահպանումի գործին մէջ: Գերմանիոյ վաչապետին հետ իր տեսակցութեան ընթացքին, խօսելով հայ-ատրպէյճանական համաձայնագրի Նախաստորագրումին մասին, Ալիեւ նշեց, որ փաստացի վերջ գտած է 30 տարի տեւած հակամարտութիւնը եւ Պաքու անցած է գործնական քայլերու: «Մինչեւ

Շարունակութիւնը տեսնել էջ 2

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՑԱԻԱԼԻ ՎԻՃԱԿԸ

Լիբանանի մէջ համացանցի կապին դանդաղութիւնը արտասովոր երեւոյթ մը չէ իւրաքանչիւր բնակիչի համար: Համացանցի դանդաղութեան աստիճանը խորքին մէջ երեւակայական երեւոյթ մը չէ, այլ յաճախ կը հաստատուի համապատասխան կառոյցներու ուսումնասիրութիւններով: Նորագոյնը՝ համացանցային կապի արագութիւնը արժեւորող speedtest.net կայքն էր, որ իրապարակեց համացանցի Յունիս 2026-ի արագութիւնը՝ թէ՛ հաստատուն լայնաշերտ (Fixed Broadband), թէ՛ շարժական (mobile) կապի պարագային: Ի յայտ եկաւ, որ անցեալ ամիս համացանցի ամենէն արագ շարժական կապը վայելած են Արաբական Միացեալ Եմիրութիւններուն բնակիչները (672.87 Mbps), մինչ յաջորդ երեք դիրքերը գրաւողները եւս Ծոցի արաբական երկիրներ են. Զաթարը՝ 561.28 Mbps, Զուէյթը՝ 379.28, եւ Պահրէյնը՝ 267,68 Mbps: Լաւագոյն տասնեակին մնացեալ երկիրներն են Պրագիլը, Պրունայը, Հարաւային Զորեան, Սէուտական Արաբիան, Պուկարիան եւ Միացեալ Նահանգները՝ 10-րդ: Վատագոյն ինգեակին մէջ են Պոլիվիան, Աֆղանիստանը, Լիպիան, Նիքարակուան եւ Պոսնիան: Ոչ զարմանալիօրէն, Լիբանան ցանկագրուած 98 երկիրներուն մէջ 87-րդ է, թէեւ Մայիսի աղիւսակին համեմատ յառաջացած է 7 դիրքով, հասնելով 38.23 Mbps միջին արագութեան, մինչ համաշխարհային միջինը 112.07 է: Շրջակայ երկիրներէն Կիպրոս 45-րդ է, Իսրայէլ՝ 65, իսկ Սուրիա եւ Պաղեստին ընդհանրապէս ներառուած չեն ուսումնասիրութեան մէջ:

Ինչ կը վերաբերի համացանցի հաստատուն լայնաշերտ կապին, որ կը գործածուի մանաւանդ տուններուն եւ աշխատավայրերուն մէջ, ապա Լիբանանի վիճակը նոյնիսկ աւելի ցաւալ է եւ մայրիկներու երկիրը մաս կը կազմէ 149 երկիր ներառող աղիւսակի վատագոյն տասնեակին: Լիբանան Յունիսին 141-րդ էր, Մայիսէն ետք Նահանջելով երկու դիրք: Բաղդադած համաշխարհային 125.59 Mbps-ին հետ, լիբանանեան համացանցին միջին արագութիւնը ընդամենը 21.49 Mbps էր:

Շարունակութիւնը տեսնել էջ 2


ԴԱՎԻԴՆԵՐՈՒ ԵՒ ԴԱՎԻԴՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

(ԼՕԶԱՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԻ ՍՏՈՐԱԳԻՄԱՆ ԱՌԹԻՒ)

Եթե փորձենք լակոնական ոճով բնութագրել Հայկական հարցը եւ մեր ժողովուրդին բաժին հասած դառնությունները, կարելի է ըսել՝ դահիճներու եւ դահիճներու միջեւ տառապած հարց:

Դեռեւս 1878 թուականէն՝ Սան Ստեֆանոյի եւ ապա Պերլինի դաշնագիրներէն ետք, հայութեան ճակատագիրը տարուբերեցաւ օսմանցի դահիճներու սայրասուր եաթադանին եւ միջազգային դիւանագիտութեան սառնաշունչ դահիճներու միջեւ, ուր բազմած էին անյազ գայլերու եւ խորամանկ աղուէսներու վոհմակներ՝ իրարու կոկորդ բզբտող: Փոքր եւ անկար ժողովուրդներու բախտի անիւը, ըստ օրինաչափութեան, անբակտէլիօրէն կաշկանդուած եւ կապուած կ'ըլլայ մեծ տերութեանց շահերուն, քմահաճութեան եւ հաշիւներուն հետ: Մերին ալ եղաւ այդպիսին... եւ... դառնօրէն ողբալի...:

Այս տխուր եւ լեղի մտորումները կ'ունենանք յա՛տկապէս 24 Յուլիսին, երբ պատմութեան յուշատետրը կը յիշեցնէ, որ Լօզանի տխրահռչակ դաշնագիրին ստորագրման օրն է այսօր: Մէկ խօսքով՝ դիւանագիտութեան դահիճներուն մէջ կազմակերպուած Հայկական հարցին յուղարկաւորութեան օրը. այսինքն՝ դահիճներու «յաղթանակ»ը դահիճներու երկայնքին:



Ինչպիսի՛ մարտիրոսագրութիւն մը եղաւ հայութեան կեանքը իր հայրենի հողին վրայ՝ թող վկայէն գեղեւատես մեր նախահայրերը. թող վկայէն վերապողոններու ըստմէլի պատմութիւնները եւ սահմոկէցուցիչ յուշերն անոնց: Միւս կողմէ, ինչպիսի՛ խաբէպատիր դիւանագետներ, «մարդասեր» ճարտասաններ եւ «բարեկամ»ի պատմունանով նենգ քաղաքագետներ հայոց տառապանքը դարձուցին սակարկութեան նիւթ՝ դահիճներուն հետ, դահիճներու ետին: Բազում են մայրաքաղաքները անոնց՝ Լոնտոն ու Փարիզ, Պերլին ու Մոսկուա, Պոլիս ու Թիֆլիս: Եւ վերջինը՝ Լօզան... ուր թաղեցին Սեւրի դաշնագիրը եւ մեծապատուեցին դահիճները հայոց:

Հրապարակի վրայ կարելի է գտնել Լօզանի դաշնագիրի քուլիսներու ետին բանակցած հայ գործիչներու յուշերն ու արձանագրութիւնները՝ օրը օրին: Անտիպ Ահարոնեանի, Լեւոն Բաշալեանի, Հրաչեայ Տեր Ներսէսեանի գրառումները հարազատօրէն ի ցոյց կը հանեն այն խարդաւանքները, որոնք կը հիւսուէին հայութեան դէմ, որ դեռ յոյսերով լի կը սպասէր ինչ-որ լոյսի Նշոյլներ Լօզանի ափերէն: Միայն ու միայն արցունքով ու զայրոյթով կարելի է կարդալ այդ Էջերը, եթէ տըրն էք ծով համբերութեան, ի հարկէ:

Դիւանագիտական գրոյցներու ընթացքին, խօսք անգամ չկար անկախ Հայաստանի մասին: Հայ պատուիրակները մղուած էին երկրորդական դերակատարութիւն ունենալու՝ աղերսարկուի կարգավիճակով: Մեծերը լսել անգամ չէին

ԱՄԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ (Նիկոսիա)

ուզեր հայկական ինչ-որ իրաւունքներու մասին: Չորոցներու մէջ՝ Հայկական Օճախի գաղափարը կամ հայկական Home մը ստեղծելու մտմտութեան, թրջական կողմը կը մերժէր կատաղի պնդանակատութեամբ: Այս կտորուկ հրահանգը կու գար Անքարայի Նոր յաղթական դէկավարէն՝ Մուսթաֆա Զեմալ Աթաթուրքէն, որ Լօզանի թրջական պատուիրակութեան կը պատգամէր՝ «Երմենի մեսէլեսի ետք» (Հայկական հարց չկայ): Ե՛ւ արեւելքէն եւ թե՛ արեւմուտքէն, այդ օրերուն, լծուած էին սիրաշահելու Թուրքիոյ Նոր փայլող աստղը՝ Աթաթուրքը, որ իր հերթին ճարպկօրէն եւ հմտօրէն կ'օգտագործէր իր երկրին շահերուն համար յարմարագոյն այդ պահը: Խաղը մեծ վարպետութեամբ կը խաղար Թուրքիոյ Նոր հայրը:

Դահիճներու մեծ ասպետներուն տուած պատասխանները հայ ներկայացուցիչներուն ինչքա՛ն պղտոր ու տարտամ բառ-կապակցութիւններ էին՝ միջազգային դիւանագիտութեան շա՛տ ծանօթ: Իսկ խրախուսիչ հատուկէտ արտայայտութիւնները՝ բարեմաղթանքներ ըլլալու սահմանուած՝ երազախաբութեամբ աւարտող: Դէպի Լօզան լիայոյս գացին մեր պատուիրակները. բեկբեկուած ժողովուրդի մը դարման մը եւ մխիթարութիւն մը որոնելու համար ջանք չխնայեցին յամառօրէն. տասնեակ տարիներ չարջրկուած հարցի մը դրական լուծման հետամուտ էին վստահապէս. համոզուած՝ որ «յոյսը վերջինն է որ կը մեռնի», դռնէ դուռ ինկան ազգի մը սրտի տրոփները իրենց կուրծքին: Բայց... դահիճներու եւ դահիճներու ծանօթ «թատրոն»ը վճռած էր ամէն ինչ: Անոնք Լօզանէն վերադարձան ձեռնտուանյ... սեւ տապանաքար մը դրուած հայոց ցախի ու տառապանքին, փայլալայած երագին ու յոյսին...:

Ուշագրաւ մատնանշում մը կատարած է անուանի բուլշեփի գործիչ եւ հրապարակագիր Սարգիս Խանոյեան դեռեւս 13 Յուլիս 1913 թուականին, երբ Հայկական հարցը դարձեալ կ'արծարծուէր բռնւթ թափով Կովկասի եւ Եւրոպայի մէջ, խօսքը քաղաքական գործերով խանդավառներուն ուղղելով եւ «Կովկասի Լրաբեր» թերթին մէջ գրելով. «Եթէ Ռուսաստանի, կամ համուր Եւրոպային պէտք կը գայ մի օր ազատ հայկական իշխանութիւն կամ թագաւորութիւն, նա, անհոգ կացիք, առանց ձեր եւ մեր ծանր ու բարակ խորհուրդների էլ, իր ցանկութիւնների իրագործման եւ ձեռք գիտի, եւ հարկ եղած միջոցներն ունի»:

Յիրաւի, դահիճներու հանրածանօթ վարպետները՝ միացած տխրածանօթ դահիճներուն, տնօրինեցին այնպէս՝ ինչպէս որ ցանկացան: Թաղեցին մեր ծով արեան պայքարի պատմութեան էջը:

Լօզանէն ետք, սեւաթոյր պարութեայով փակուած էր Հայկական հարցը մինչեւ 1973 թուական, երբ զինեալ պայքարի առաջին կրակոցները լսուեցան Գալիֆորնիայէն՝ Գուրգէն Եանիկեանի արձակած փամփուշտներով:

Յ. Գ. Այսօրուան պրիսմակով նայելով այս հարցին, ակամայից պիտի մտորէլ.- լաւ, եթէ Լօզանի մէջ հայ ներկայացուցիչները ոգի ի բռին կը պայքարէին հայրենի օճախ մը ունենալու համար, աչ ու ահեակ կը վազվզէին բռնախելեալ հայրենիքէն գէթ բեկոր մը ապահովելու համար, իսկ ինչո՞ւ այսօր, երբ ունինք այդ բեկորը՝ Հայաստանի Հանրապետութիւնը, լայն թափով, շարան-շարան կը վազվզեն անկէ դէպի օտար ափեր: Մի գուցէ դահիճներու դիւանագետները կը գուշակէին, որ հայրենիքի տեր դառնալէ ետք, մերազն որդիները պիտի նախընտրէին Գալիֆորնիոյ ծովափը, Փարիզի կապուտակ երկինքը, Ռուսաստանի տափաստանները, Փաֆոսի զովալ լողաւազանը, Վանքովքի ծիւնամրրիկը կամ Նիւ Չելանտայի զովասուն երեկոները... եւ այս շարքը վերջ չունի, ցաւօք:

ՆԱԻՌԻ ԴԻՄԱՃ ԵՆԹԱԿԱՌՈՅՑ

Շարունակուած էջ 1-էն

հորդէներ եւ ինկած են վիրաւորներ: Թէւ ուքրանական յարձակումներէն մարդ չէ մահացած, անոնց պատճառած նիւթական վնասը հասած է աննախադէպ մակարդակի: Wildberries-ի պահեստներուն մէջ բռնկած հորդէներուն վնասը գերազանցած է ռուսական 53 տարածաշրջաններու տարեկան պիւտճէները:

ԹՈՒՐԵՒՈՅ ՄԵՋ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ ընդդիմութեան առաջնորդ Օզկիւր Օզել յայտնեց, թէ որոշած է հեռանալ ընդդիմադիր գլխաւոր՝ ժողովրդահանրապետական կուսակցութենէն եւ հիմնել քաղաքական Նոր ուժ մը: Այդ որոշումին յանգած է նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանը քննադատողներուն նկատմամբ շարունակուող դատական հետապնդումներուն լոյսին տակ: Ըստ «Ռոյթըրզ» գործակալութեան, չէ քացառուած, որ դար մը առաջ Աթաթուրքի հիմնադրած Ժողովրդահանրապետական կուսակցութեան անդամներուն ու երեսփոխաններուն մէկ մասը հետեւի Օզելին՝ դէպի Նոր կուսակցութիւն: Ան Մայիսին զրկուած էր կուսակցապետի պաշտօնէն, որովհետեւ դատարանը չէղարկած էր ներկուսակցական ընտրութեան արդիւնքը: Օզել հաւաստիացուց, որ Նոր կուսակցութիւնն հիմնելով պիտի չհրաժարի Էրտողանի նկատմամբ քաղաքական ճնշում բանեցնելէ, այլ պիտի շարունակէ ընդդիմադիր պայքարը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԿԱԶՄԸ ՊԱՏՐԱՍ Է

Շարունակուած էջ 1-էն

օրս, անելի բն 40 հազար թոն բեռ Ատրպէյճանի տարածքով փոխարդուած է Հայաստան», ըսաւ Նախագահը: Ալիեւի Պերլին կատարած այցելութեան ընթացքին բողոքի շարժումներ կազմակերպեցին ընդդիմադիր ատրպէյճանցիներ, որոնք իրենց երկրին նախագահը դիմաւորեցին «բռնա-



պետ» վանկարկումներով: Լշէնք, որ Գերմանիոյ հետ ռազմավարական երկխօսութիւն սկսելու Պաքոյի մտադրութիւնը յառաջացուցած է Մոսկուայի դժգոհութիւնը: Ռուսիոյ պետական տումայի երեսփոխաններէն Ալեքսանտրը Թոլմաչով ցաւ յայցնեց, որ «Ատրպէյճան եւս որոշած է երթալ Հայաստանի ուղիով, սակայն Ռուսիայէն հեռանալով Եւրոպային մօտենալու քաղաքականութիւնը տակաւին ոչ մէկ կողմի յաշտութիւն բերած է»:

ԵՐԲ ԶՈՒՆԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԿԱՆՈՆ.

ՍՓԻՒՌՔԱՇԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԻ ՏԱԳՆԱԴԸ

ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵՆԵԱՆ

Վերջերս, Նախկին լիբանանահայ եւ այժմ Ֆրանսա ապրող հանրածանօթ երգիչ, դերասան Վիգէն Դարբինեանէն խմբագրութիւնս ստացաւ հետագայ երկտողը՝ հարցումի ձեւով. «Արուեստասէր մը, արուեստագէտ մը, արուեստով զբաղուող մը, մտաւորական մը, մշակոյթի գործիչ մը պէ՛տք է ունենայ ծառայասիրութիւն վասն ոչինչի ու դառնայ մտրացկա՛ն»:

Այդ երկտողը իսկապէս արժանի է խոր քննարկման եւ խորհրդածութեան՝ ո՛չ այնքան իր կտորուկ ձեւակերպումին պատճառով, այլ որովհետեւ անիկա կը վերաբերի սփիւռքեան կեանքի այն իրականութեան, որուն բոլորս ծանօթ ենք, բայց հազուադէպօրէն կը խօսինք: Այս յօդուածը այդ հարցումին ուղղակի պատասխան մը չէ. անիկա փորձ մըն է հասկնալու, թէ ինչպէ՛ս ծառայասիրութիւնը, որ երկար տարիներ մեր համայնքներու գոյատեւման մեծագոյն ուժերն մէկը եղած է, երբեմն աննկատ կերպով վերածուած է մնայուն զոհաբերութեան ակնկալութեան՝ վտանգելով Նոյն այն մշակոյթը, որուն պահպանման կոչուած էր ծառայելու:


Մեր ժողովուրդը գուրգուրանքով կը խօսի հայ մշակոյթին մասին: Ամէն առիթով կը կրկնենք, որ լեզուն, գրականութիւնը, երաժշտութիւնը, թատրոնը, կերպարուեստը եւ մտաւոր կեանքը մեր ինքնութեան ողնաշարը կը կազմեն: Մենք կը հպարտանանք մեր գրողներով, բանաստեղծներով, երգահաններով եւ երգիչներով, դերասաններով, նկարիչներով ու մտաւորականներով: Անոնք մեր ազգային յիշողութիւնը կրողներն են, մեր ինքնութեան պահապանները, մեր գոյատեւման երաշխիքները:



Բայց այս գեղեցիկ խօսքերուն կողքին կայ անհանգըստացնող իրականութիւն մը, որուն մասին շատ քիչ կը խօսինք: Ինչո՞ւ սփիւռքահայ իրականութեան մէջ մշակոյթը կը մեծարուի, իսկ մշակոյթ ստեղծող մարդը յաճախ կը մոռցուի: Առաւելագոյն պարագայի՝ յետմահու կը յարգուի: Առաջին հայեացքով այս խնդիրը կրնայ նիւթական թուիլ: Իրականութեան մէջ բարդական է: Խնդիրը այն չէ, թէ արուեստագէտը որքան կը վաստակի: Խնդիրը այն է, թէ համայնքը ի՞նչ պատկերացում ունի արուեստագետին դերակատարութեան մասին: Այս հարցը միայն արուեստագետին մասին չէ: Անիկա կը վերաբերի սփիւռքեան մտածելակերպի մը, որ վերաքննութեան կարիք ունի: Սփիւռքը երկար տարիներ գոյատեւած է ծառայասիրութեամբ: Բայց այսօր Նոյն այդ ծառայասիրութիւնը, երբ կը վերածուի մշտական զոհաբերութեան ակնկալութեան, կրնայ վտանգել այն մշակոյթը, որուն պահպանման համար ստեղծուած էր:

Հետագայ արտայայտութիւնը Սփիւռքի գրեթէ բոլոր գաղութներուն մէջ լսուած է:

- «Ազգային գործ է»:
- «Համայնքին համար է»:
- «Անիկա ծառայութիւն է»:



Այս բոլոր արտայայտութիւնները ազնիւ մտադրութենէ կը ծնին: Սակայն ժամանակի ընթացքին անոնք ստեղծած են մտածելակերպ մը, որուն վտանգը հազիւ կը նկատենք: Անիկա այն ենթադրութիւնն է, թէ մշակութային աշխատանքը տոկոսական աշխատանք չէ: Գրողը պէտք է գրէ, որովհետեւ հայ է: Երաժիշտը պէտք է նուագէ, որովհետեւ համայնքը զինք կը կանչէ: Գեղանկարիչը պէտք է ցուցադրէ, որովհետեւ ազգային գործ կը կատարէ: Դերասանը պէտք է բեմ բարձրանայ, որովհետեւ թատրոնը կը ծառայէ հայապահպանութեան: Եւ այս բոլորին մէջ աննկատ կը կորսուի ամենապարզ ճշմարտութիւնը. այս բոլորը աշխատանք է՝ երկար տարիներու ուսում, փորձ, ծախողութիւն, կատարելագործում եւ անտեսանելի յոյժութիւն:

ԻՆՉ՝ՈՒ ՄԻԱՅՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՈՐ

Եթէ Նոյն տրամաբանութիւնը կիրարկենք ուրիշ մասնագիտութիւններու նկատմամբ, անմիջապէս պիտի զգանք

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ ՄԻՏՆԻԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՋՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԷՆ

Սփիւռքի մէջ, հայ դպրոցը ե՛ւ կրթական հաստատութիւն է ե՛ւ ազգային ինքնութեան ամրոցներէն մին, ուր ամէն օր կը մղուի լուռ, բայց ճակատագրական պայքար մը՝ լեզուն, մշակոյթը եւ ազգային պատկանելիութիւնը սերունդէ-սերունդ փոխանցելու համար: Այդ պատճառով ալ, երբ աշխարհի որեւէ անկիւնի մէջ հայ ուսուցիչներ կը համախմբուին՝ խորհրդակցելու իրենց առաքելութեան, դժուարութիւններուն ու ապագայի ուղիներուն շուրջ, այդպիսի նախաձեռնութիւնները կը գերազանցեն սովորական համագումարի սահմանները:

Այս համոզումով էր, որ Սիտնիի մէջ որպէս դիտորդ-հիւր ներկայ գտնուեցայ «Հայապահպանութեան կրթական առաքելութիւն» խորագրով հայ ուսուցիչներու համագումարին: Կը փափաքէի մօտէն իմանալ, թէ հայրենիքէն շուրջ տասնչորս հազար քիլոմէթր հեռու, անգլիախօս եւ արագ ծուլման վտանգներ դիմագրաւող Աւստրալիոյ մէջ ի՞նչ վիճակի մէջ է հայ կրթական կեանքը, ի՞նչ մարտահրաւերներու առջեւ կը գտնուին ուսուցիչները եւ ի՞նչ լուծումներ կը փորձեն գտնել գաղութի կրթական պատասխանատուները:



Համագումարը, որ տեղի ունեցաւ 18 Յուլիս 2026-ին, ՀԲԸՄ-ի Ալեքսանտր ամենօրեայ վարժարանին մէջ, Աւստրալիոյ եւ Նիւ Չեյանտայի Հայոց թեմի Առաջնորդ գերշ. Տ. Վարդան եպս. Նաւասարդեանի նախաձեռնութեամբ, պետական կրթական ներկայացուցիչի մասնակցութեամբ, հայ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներու եւ ՀԲԸՄ-ի ատենապետին ներկայութեամբ:

Մասնակցած էին երկու ամենօրեայ եւ ինը շաբաթօրեայ հայկական վարժարաններու շուրջ եօթնասուն ուսուցիչ-ուսուցչուհիներ եւ անոնց տնօրէնները: Ներկայ էր նաեւ Մելբուրնի «Ակիւնեան» ազգային վարժարանի պատուիրակուիւնը:

Արդէն մուտքէն իսկ կը զգացուէր, որ կազմակերպիչները ոչ մէկ մանրամասնութիւն անտեսած էին: Ամէն մէկ մասնակիցին պատրաստուած էր յատուկ պայուսակ՝ համագումարի ծրագիրով, Առաջնորդ Սրբազանին ողջոյնի խօսքով, արժեւորման հարցաթերթիկով, նօթատետրով, գրիչով եւ մասնակցութեան վկայագիրով: Անուններով պատրաստուած քարտերը, նիստերու կարգապահ կազմակերպումը եւ ամբողջ օրուան աշխատանքային մթնոլորտը կը վկայէին, որ կազմակերպիչ յանձնախումբը ամիսներու վրայ երկարող հերթական բազմաթիւ նախապատրաստական նիստեր գումարած են, որուն համար մեծապէս շնորհաւորելի են:

Օրուան ընթացքին հնչեցին բազմաթիւ ողջոյնի խօսքեր եւ զեկուցումներ: Կազմակերպիչ յանձնախումբին կողմէ բացման խօսքով հանդէս եկաւ տիկին Սեդա Բեռլէրեանը: Ողջոյնի խօսքեր արտասանեցին պետական ներկայացուցիչ Զայ Լուև, Թեմական խորհուրդի ներկայացուցիչ դոկտ. Ստեփան Գրգեաշարեանը, եւ հայ մշակութային միութիւններուն անունով՝ Զանի Նազարեան-Օգճեանը:



Ելոյթներ ունեցան Մանուկ Տեմիրճեան՝ տնօրէն ՀԲԸՄ Ալեքսանտր վարժարանի, «Հայ լեզուի ուսուցումը աւագ դասարաններուն մէջ» թեմայով, եւ Յարութիւն Մարաշեան՝ «Արեւմտահայերէնի պաշտպանութեան հարց» նիւթով:

Առաջին զեկույցին նիւթն էր՝ «Հայագիտական առարկաներու նորարար ուսուցման ձեւերը. ինչպե՞ս բարելաւել հայերէնի բանաւոր խօսքը», զեկուցող՝ դոկտ. Ալիսա Մարաշեան-Բելվանեան (Մելբուրնէն):

Երկրորդ զեկույցին նիւթը՝ «Հայապահպանութիւնը եւ աշխատանքը ծնողներու հետ»։ զեկուցեց Զեփիւռ Խպիլի-Եան, առցանց տարբերակով Հայաստանէն:

Բոլոր զեկույցներուն հետեւեցան խմբային քննարկումներ, ուր ուսուցիչները՝ վեց խմբակներու բաժնուած, ազատօրէն փոխանակեցին փորձառութիւն, մտահոգութիւն եւ առաջարկներ:

Համագումարը չսահմանափակուեցաւ միայն տեսական քննարկումներով: Երաժշտական դադարները, համատեղ երգեցողութիւնը եւ շարժողական վարժութիւնները աշխատանքային օրը վերածեցին նաեւ մարդկային ջերմ շփումներու, փոխադարձ ճանաչողութեան եւ համագործակցութեան մթնոլորտի: Այդ մթնոլորտը, թերեւս, Նոյնքան արժեքաւոր էր, որքան զեկուցումները, որովհետեւ երբեմն մարդիկ նախ իրար պէտք է ճանչնան, որպէսզի միասին կարենան գործել:

Սակայն, որպէս նախկին կրթական պատասխանատու, ինծի համար հետաքրքրականը միայն օրուան ծրագիրը չէր: Աւելի կարեւոր էր հասկնալ, թէ այս ամբողջ նախաձեռնութիւնը ի՞նչ կը նշանակէր սփիւռքեան կրթութեան լայն պատկերին մէջ: Արդե՞տք այս մէկը սովորական ժողով մըն էր, թէ՛ իսկապէս սկիզբ մը՝ աւելի մեծ շարժումի, որ կրնայ նոր շունչ հաղորդել հայ կրթական կեանքին:



Եթէ մէկ նախադասութեամբ պէտք ըլլայ բնութագրել այս համագումարը, պիտի ըսեմ, որ անիկա օգտակար եւ յուսադրող նախաձեռնութիւն մըն էր:

Աւստրալիան այն երկիրներէն է, ուր հայապահպանութեան աշխատանքը կրկնակի դժուար է: Անգլերէնը կը տիրէ ընտանիքէն մինչեւ համալսարան, աշխարհագրական հեռաւորութիւնը բնական կապը կը նուազեցնէ հայրենիքին հետ, իսկ ծուլման վտանգը՝ ամենօրեայ իրականութիւն է: Այս պայմաններուն մէջ շուրջ եօթնասուն հայ ուսուցիչներու, երկու ամենօրեայ եւ ինը շաբաթօրեայ վարժարաններու ներկայացուցիչներու մէկ յարկի տակ համախմբումը ինքնին փոքր յաղթանակ մը կը նշանակէ:



Այս պատճառով ալ, իմ գնահատականով, համագումարին առաջին արժանիքը ոչ թէ հնչած զեկուցումներն էին, այլ՝ համախմբելու կարողութիւնը: Պետական ներկայացուցիչին ներկայութեամբ այս տարողութեամբ համագումարը մեծ բարենիշ մըն է ե՛ւ կազմակերպիչին ե՛ւ յատկապէս հայ համայնքին համար: Այս նախաձեռնութեան գլխաւոր արժանիքը, անշուշտ, կը պատկանի գերշ. Տ. Վարդան եպս. Նաւասարդեանին: Ան, իմ տպաւորութեամբ, իր առջեւ անհասանելի նպատակներ չէր դրած: Ընդհակառակը՝ փորձած էր նախ գնահատել հայ ուսուցիչը, ապա իրական պատկերը տեսնել, ուսուցիչները լսել, անոնց իրարու ծանօթացնել, վտահոլութեան մթնոլորտ ստեղծել եւ միայն անկէ ետք մտածել հետագայ գործնական քայլերուն մասին: Ինչպէս որ սրբազանը արտայայտուեցաւ իր եզրափակիչ խօսքին մէջ՝ «արդե՞տք մենք պէտք ունի՞մք նոր ծրագրերու, նոր դասագիրքերու, նոր ուսուցիչներու, մեր ունեցած ուսուցիչներու վերապատրաստման, Հայաստանի հետ մեր կապերը զօրացնելու, թէ՛ սփիւռքեան այլ գաղութներու փորձառութենէն օգտուելու: Ի՞նչի պէտք ունինք, որպէսզի ամէն տարի թէկուզ փոքր քայլերով յառաջ երթանք: Ինչպե՞ս հայերէնը դարձնել հայ մանուկին սիրելի լեզուն, ինչպե՞ս բանաւոր խօսքը զարգացնել, ինչպե՞ս ծնողները դարձնել կրթական առաքելութեան մասնակից եւ ոչ միայն դիտորդ»:



Անկեղծ կարծիքս այն է, որ այս համագումարը վերջնակէտ մը չէր, այլ՝ սկիզբ մը: Կը համարձակիմ ըսել, որ գերաշնորհ Սրբազանը այստեղ չփորձեց լուծել տարիներու ընթացքին կուտակուած բոլոր խնդիրները: Ան, աւելի շուտ, կրակին առաջին կայծը վառեց: Իսկ կայծը, եթէ պահպանուի, կրնայ վաղը դառնալ լոյս եւ ջերմութիւն:

Այդ պատճառով ալ ես այս նախաձեռնութիւնը կը գնահատեմ ոչ այնքան իր մէկօրեայ արդիւնքներով, որքան այն հեռանկարով, որ կրնայ ստեղծել, եթէ շարունակականութիւն ունենայ:

Այս համագումարը ինծի մղեց նաեւ մտածելու սփիւռքեան կրթութեան ընդհանուր պատկերին մասին: Անկեղծօրէն ըսեմ, չեմ յիշեր, որ մեր ապրած գաղութներուն մէջ, յատկապէս եկեղեցական առաջնորդութեան նախաձեռնութեամբ, այս տարողութեամբ եւ այսպիսի ներկայացուցչա-

ՆԱԶՕ ԵՐԷՒՇԵԱՆ (Սիտնի)

կան մասնակցութեամբ հայ ուսուցիչներու համագումար կազմակերպուած ըլլայ: Եթէ սխալիմ, սիրով պիտի ընդունիմ ուղղումը, սակայն յիշողութիւնս նման օրինակ մը չէ պահած:

Այո՛, տարիներ առաջ Հայեպի մէջ տեղի ունեցած էր խորհրդակցական հանդիպում մը, որուն մասին հանգամանօրէն եւ անկաշկանդ գրիչով անդրադարձած էր մեր յօդաձագիր Լեւոն Շառոյեանը:



Բայց այդ մէկէն զատ, համասփիւռքեան իրականութեան մէջ նման նախաձեռնութիւններ հազուադէպ են: Մինչդեռ կրթական մարտահրաւերները ամէն տարի կը խորանան, դպրոցներ կը փակուին, հայերէնով լեզուն դասարաններ կը նօսրանան, իսկ երբեմնի հայկական կրթական օճախներուն մէջ օրըստօրէ կը շատնան օտար աշակերտները:

Համագումարին ընթացքին ուրախութեամբ նկատեցի նաեւ, որ Սիտնիի երկու ամենօրեայ հայկական վարժարաններու տնօրէնները, բոլոր ուսուցիչները բնական մտերմութեամբ կը շփուէին, խօսուն տեսարաններով նիւթերը կը քննարկէին եւ փորձառութիւն կը փոխանակէին:

Սակայն, որքան ալ դրական ըլլայ ընդհանուր պատկերը, առողջ մտածողութիւնը կը պահանջէ նաեւ նկատել այն հարցերը, որոնք վաղը կրնան աւելի լուրջ մարտահրաւերներ դառնալ:



Ուսուցչական կազմին տարիքային պատկերը: Ներկաներուն ճնշող մեծամասնութիւնը նուիրեալ, փորձառու եւ նկրտեալ ուսուցչուհիներ էին, որոնց ծառայութիւնը անվիճելի արժէք է: Բայց միեւնոյն ժամանակ ակներեւ էր, որ երիտասարդ սերունդի մասնակցութիւնը սահմանափակ էր: Այս երեւոյթը միայն Աւստրալիոյ խնդիրը չէ. Նոյն պատկերին ակնատես եղած ենք Միջին Արեւելքի գաղութներուն մէջ եւս: Երբ փորձառութիւնը չի միանար երիտասարդական նորարար մտածողութեան, կրթական համակարգը դժուար կը յարմարի նոր ժամանակներու պահանջներուն:

Սակայն այստեղ ալ հարցը միայն դիտարկումով չի լուծուիր: Ռ՝րկէ պիտի գան այդ երիտասարդ ուսուցիչները, երբ շատ դժուար է գտնել հայերէնին բաւարար տիրապետող երիտասարդներ, որոնք պատրաստ են ընտրելու ուսուցչական այս դժուար, բայց սրբազան ուղին: Ահա այս է այն հիմնահարցերէն մէկը, որուն լուծումը պիտի պահանջէ երկարաժամկետ մտածողութիւն, ծրագրաւորում եւ ներդրում:

Եզրափակենք, յատուկ գնահատանքի խօսք ուղղելով գերշ. Տ. Վարդան եպս. Նաւասարդեանին՝ իր հայրական հոգածութեան, հեռատես առաջնորդութեան եւ այս նախաձեռնութիւնը իրականութիւն դարձնելու վճռակամութեան համար: Նոյնքան երախտագիտութեան արժանի է կազմակերպիչ յանձնախումբը, որ ամիսներ շարունակ հետեւողական աշխատանքով կրցաւ համախմբել գաղութի կրթական ընտանիքը եւ արժանապատիւ կերպով կեանքի կոչել այս կարեւոր նախաձեռնութիւնը:

Եւ հիմա կը վերադառնամ այն հարցումին, որ թերեւս շատերու մտքին մէջ ալ կը ծագի:

Արդե՞տք այս համագումարը պիտի դառնա՞յ համագործակցութեան ամրապնդման եւ նոր գաղափարներու ծնունդի սկիզբ: Այստեղ հնչած առաջարկները գործնական քայլերու պիտի վերածուի՞ն: Գերշ. Տ. Վարդան Սրբազանի նախաձեռնութիւնը պիտի շարունակուի՞, թէ՛, ինչպէս բազմաթիւ գեղեցիկ նախաձեռնութիւններ, ժամանակի ընթացքին պիտի մարի:

Իմ գգուշաւոր, սակայն յուսադրող պատասխանը հետեւեալն է.- Կը հաւատամ, որ այս նախաձեռնութիւնը սկիզբ մըն է: Ոչ ոք մէկ օրուան մէջ կրնայ լուծել տարիներու ընթացքին կուտակուած խնդիրները: Սակայն մեծ գործերը միշտ ալ առաջին համեմատ քայլով կը սկսին: Այս համագումարը այդ առաջին քայլն էր:

Ան վառեց կայծ մը: Այժմ կարելորը այդ կայծը պահպանելն է, որպէսզի վաղը ան վերածուի մնայուն լոյսի:

ՍՓԻՒՌԲԱՆՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԻ ՏԱԳԼԱԴԸ

Շարունակում է 2-էն

անոր անհեթեթությունը: Ոչ ոք կը սպասէ, որ բժիշկը անվճար վիրահատէ, որովհետեւ հիւանդը հայ է: Ոչ ոք փաստաբանին կ'ըսէ, թէ դատը անվճար ստանձնէ, որովհետեւ ազգային հարց է: Ոչ ոք ճարտարապետին կը պահանջէ ձրիաբար ծրագիր պատրաստել, որովհետեւ շէնքը հայկական հաստատություն մըն է: Բայց մշակութային գործիչին պարագային այդ ակնկալությունը գրեթէ բնական կը նկատուի: Կարծես մշակոյթը ստեղծող մարդը նիւթական կարիքներ չ'ունենար: Կարծես ան ընտանիք չ'ունենար: Կարծես տան վարձը, ուսման ծախս կամ առօրեայ հոգեր գոյութիւն չունենային:

Ծառայասիրութիւնը առաքինութիւն է, ոչ թէ պարտաւորութիւն: Միալ պիտի ըլլար նուաասացնել ծառայասիրութիւնը: Հայ ժողովուրդի պատմութիւնը անով լեցուն է: Մեր դպրոցները, ակումբները, երգչախումբերը, սկաուտական շարժումները եւ բարեսիրական հաստատութիւնները գոյատեւած են հազարաւոր կամաւորներու շնորհիւ: Ծառայասիրութիւնը մեր հաւաքական ուժերէն մէկն է: Բայց ծառայասիրութիւնը բարոյական արժէք ունի միայն այն ատեն, երբ ազատ ընտրութիւն է: Երբ ան կը վերածուի ակնկալութեան, ապա կը դադրի ծառայասիրութիւն ըլլալէ: Կը դառնայ պարտադրանք: Աւելի'ն, կը դառնայ մեղքի զգացումի միջոց: Ով որ համարձակի իր աշխատանքին դիմաց վարձատրութիւն պահանջել, յաճախ կը զգայ, թէ



կարծես համայնքին կամ ազգին դէմ մեղանշած է:

Այս մտածելակերպին մեծագոյն վնասը արուեստագետին չէ: Վնասը համայնքին է: Որովհետեւ ամէն անգամ, երբ մշակութային աշխատանքը կը ներկայացնենք իբրեւ բան մը, որ պէտք է կատարուի անվճար, մենք երիտասարդներուն պատգամ մը կը փոխանցենք. «Այս ասպարէզը ընտրելով՝ դժուար թէ ապրուստ ապահովես»: Թէեւ այս պատգամը չի հնչեր յայտնապէս, բայց անկիւ կը հասնի: Եւ տարիներ ետք կը սկսիսք դժգոհիլ. ինչո՞ւ նոր գրողներ չունինք: Ինչո՞ւ երիտասարդ երաժիշտները կը հեռանան: Ինչո՞ւ արուեստագետները օտար շրջանակներու մէջ կը ստեղծագործեն: Հաւանաբար որովհետեւ մենք երբեք իսկապէս պայմաններ չստեղծեցինք, որ անոնք իրենց տաղանդով արժանապատիւ ապրին:

Մշակոյթի համար կատարուած յատկացումները կարելի՞ է ծախս սեպել: Սփիւռքեան շատ մը հաստատութիւններ մեծ գումարներ կը յատկացնեն շէնքերու, վերանորոգումներու, սարքաւորումներու, ճաշկերոյթներու եւ բազմաթիւ այլ անհրաժեշտ ծախսերու: Բայց երբ խօսքը կը հասնի հեղինակային վարձատրութեան, դասախօսի, երաժիշտի, գրողի, թարգմանիչի, բեմադրիչի կամ նկարիչի աշխատանքին, յաճախ կը սկսիսք խնայողութիւն ընել: Կարծես մշակոյթը աւելորդ ծախս ըլլայ: Իրականութեան մէջ մշակոյթը ներդրում է: Ոչ մէկ համայնք երկարատեւ կեանք կ'ունենայ, եթէ չներդրէ իր ստեղծագործ մարդոց մէջ:

Շէնքերը ինքնութիւնն չեն ստեղծեր:
Մարդիկ կը ստեղծեն:

Հրեայ, յոյն, իրլանտական եւ իտալական սփիւռքներուն մէջ նոյնպէս ծառայասիրութիւնը կարեւոր տեղ ունի: Բայց անոնք տարիներու ընթացքին հասկցած են, որ մշակութային ստեղծագործութիւնը միայն կամաւոր աշխատանքի վրայ չի կրնար հիմնուիլ: Անոնք ստեղծած են կրթաթոշակներ, ստեղծագործական հիմնադրամներ, հեղինակային ֆոնտեր, արուեստագետներու բնակութեան ծրագրեր եւ մշակութային դրամաշնորհներ: Ոչ թէ որովհետեւ իրենց արուեստագետները աւելի արժէքաւոր են: Այլ որովհետեւ հասկցած են, որ մշակոյթը ինքնաբերաբար չի գոյատեւեր: Անկիւ պէտք է սնուցուի:

Շատ անգամ համայնքի հզօրութիւնը կը չափենք շէնքերով, դպրոցներով կամ անդամներու թիւով: Բայց համայնքի մը իսկական հարստութիւնը ուրիշ տեղ պէտք է փնտռել: Անկիւ կը գտնուի այն գրողին մէջ, որ կը շարունակէ գրել: Այն երաժիշտին մէջ, որ նոր ստեղծագործութիւն կը յօրինէ: Այն դերասանին մէջ, որ հայ բեմը կենդանի կը պահէ: Այն գեղանկարիչին մէջ, որ մեր ժամանակը հայու աչքերով կը մեկնաբանէ: Եթէ անոնք լռեն, համայնքը կամաց-կամաց կը սկսի աղքատանալ, լոյնիսկ եթէ արտաքինապէս հարուստ թուի:

Հաւանաբար ժամանակն է հրաժարելու այս տխրահռչակ նախադասութենէն.

«Մշակոյթը պէտք է ծառայէ համայնքին»:
Թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել.

Համայնքը եւս պարտաւոր է ծառայելու իր մշակոյթին:

Որովհետեւ մշակոյթը միայն գաղափար չէ: Մշակոյթը մարդիկ են: Իսկ մարդիկ արժանապատիւ կեանքի իրաւունք ունին: Եթէ իսկապէս կը հաւատանք, որ հայ մշակոյթը մեր գոյութեան հիմքն է, ապա պէտք է նոյն լրջութեամբ արժեւորենք անոնք, որոնք զայն կը ստեղծեն ու կը պահպանեն:

Ծառայասիրութիւնը գեղեցիկ առաքինութիւն է: Բայց ոչ մէկ համայնք կրնայ իր մշակութային ապագան կառուցել միայն իր արուեստագետներուն անվերջ զոհաբերութեան վրայ: Որովհետեւ երբ զոհաբերութիւնը դառնայ կանոն, ստեղծագործութիւնը դանդաղօրէն կը մարի: Իսկ այն օրը, երբ վերջին արուեստագետն ալ լուռ հեռանայ, մենք պիտի հասկնանք, որ չենք կորսնցուցած միայն անհատ մը: Կորսնցուցած պիտի ըլլանք մեր սեփական ձայնը:

«Տարբերակ 21»

ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻԼՆ ԱԼ ՄԵԾՈՒԹԻՒՆ Է

ՆԱԶՕ Ե.

Աշխարհի միլիոնաւոր մանուկներու աչքերը ամէն օր սեւեռած են ֆուլթայլի մեծ աստղերուն: Անոնք մրցումները դիտելու ընթացքին կը սորվին նաեւ վարք, կեցումձք, արժէքներ եւ օրինակներ: Այդ պատճառով ալ աշխարհի մեծ մարզիկները, ուզեն կամ չուզեն, դարձած են ապագայ սերունդին ուսուցիչները:

Սակայն, ցաւօք, այսօրուան մարզաշխարհը շատ անգամ հակառակ դասերը կու տայ:

Աստիճանաբար սորվեցանք տեսնել անճոռնի մազերու ձեւեր, մագի գունաւոր ներկումներ, ամբողջ մարմինը ծածկող դաշուածքներ («թաթու»ներ), ցուցադրական ապրելակերպ, անհամեստ կեցումձքներ եւ այնպիսի վարքագիծ, որ ոչ մէկ աղէքս ունի մեր կրօնական ու բարոյական արժէքներուն հետ: Թէեւ դժկամութեամբ, սակայն «մեր ձեռքէն ի՞նչ կու գայ»... Ժամանակի ընթացքին կարծես համակերպեցանք այդ պատկերներուն:

Բայց վերջերս ականատես եղանք աւելի մտահոգիչ երեւոյթի մը:



Աշխարհի կարեւորագոյն մրցումներէն մէկուն՝ «մոնտիալ»ի Սպանիա ընդդէմ Արժանթին աւարտականէն ետք, երբ ամբողջ աշխարհը հեռատեսիլին դիմաց կը հետեւէր ֆուլթայլի աշխարհի պիտյանին պարզեատրման արարողութեան, Արժանթինի ներկայացուցիչներու, ներառեալ Լիոնէլ Մեսսիի, կեցումձքը շատերու մօտ հարցականներ յառաջացուց: Յաղթողը շնորհաւորելու փոխարէն, անոնք դժկամութեամբ, գրեթէ երես դարձուցած, կռնակով կը հետեւէին արարողութեան:

Հարցը այստեղ մրցումին արդիւնքը չէ: Հարցը այն պատկերն է, որ այդ պահուն փոխանցուեցաւ աշխարհի միլիոնաւոր երեխաներուն:

Մենք ամէն օր դպրոցներու մէջ կը փորձենք երեխաներուն սորվեցնել, թէ պարտութիւնը կեանքի բնական մէկ մասն է: Երբ աշակերտ մը միւսէն քիչ նիշ կը ստանայ, կը վիրաւորուի, ընկերներէն կը հեռանայ կամ արտասուելու կը սկսի: Երբեմն ծնողներն ալ «մանկանալով» կը դիմեն զանգատի: Տնօրէն-ուսուցիչներ մեծ ճիգ կը թափեն բացատրելու, որ պարտութիւնը ամօթ չէ, այլ՝ սկիզբ յաջորդ յաղթանակի:

Իսկ ահա նոյն այդ երեխան, երեկոյեան տունը, իր կուռքերուն մէջ կը տեսնէ բոլորովին հակառակ պատկերը:

Ի՞նչ պիտի սորվի ան:

Որ պարտութիւնը ընդունիլը թուլութիւն է:

Որ կարելի՞ է երես դարձնել յաղթողին:

Որ մեծութիւնը միայն յաղթելու մէջ է:

Լիոնէլ Մեսսիի քանիցս ընտրուած է աշխարհի լաւագոյն ֆուլթայլիստը: Ան միլիոնաւոր մանուկներու տիպարն է: Ահա թէ ինչո՞ւ իր նման մեծութենէ մը աւելի մեծ բան կը սպասուէր:

Մեծութիւնը երբեք միայն կուլեր նշանակելը չէ: Մեծութիւնը նաեւ պարտութեան պահուն կը չափուի: Կը սպասուէր, որ ան առաջինը ըլլար, որ իր ընկերները հրաւիրէր ծափահարելու պիտյանին, շնորհաւորելու արժանի մրցակիցը եւ ցոյց տար, որ իսկական մարզիկը կը յաղթէ արժանապատիւ եւ նոյնքան արժանապատիւ ալ կը պարտուի:

Չէ՞ որ ամէն մրցումէն առաջ բոլոր խաղացողները գիտեն, թէ դաշտ մտած երկու խումբերէն միայն մէկը պիտի յաղթէ: Ուրեմն, եթէ յաղթանակը կը դիմաւորենք խոնարհութեամբ, պարտութիւնն ալ պէտք է ընդունինք նոյն մեծահոգութեամբ:

Այսօր մեր երեխաները աւելի շատ կը հետեւին անճոռնի մազերով, մագի գունաւոր ներկումներով, ամբողջ մարմինը ծածկող «թաթու»ներով մարզիկներուն, քան՝ ուսուցիչներուն, իսկ շատ անգամ ալ աւելի շատ, քան՝ ծնողներուն: Այդ իսկ պատճառով մարզական մեծութիւններուն իւրաքանչիւր շարժումը, իւրաքանչիւր ծափտը, իւրաքանչիւր ձեռքի սեղմումն ու նոյնիսկ լռութիւնը դաս կը դառնայ նոր սերունդին համար:

Աշխարհի մեծ աստղերը պէտք է գիտակցին, որ անոնք միայն ֆուլթայլ չեն խաղար: Անոնք նաեւ կը դաստիարակեն:

Իսկ երեխաներուն տրուած ամենամեծ դասը ոչ թէ յաղթանակն է, այլ՝ պարտութիւնը արժանապատուութեամբ ընդունելու կարողութիւնը:

Դեռ չենք խօսիր եւ չենք ալ ուզեր անդրադառնալ այլ ամբարտաւան «երեխայի» մը, որ իր նախագահի պաշտօնական պարտականութիւնը կատարելէ ետք, տակաւին կը յամենար դուրս գալ պիտյան Սպանիոյ բաժակի ցնծութեան գլխաւոր բեմէն, խմբային նկարի մը արժանանալու երեխայական տենչով:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradartert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية
تصدر عن شركة ماسيسر للصفاة والشر (م.م.م.)

**ՎԱՐՈՎԱՐՈՒ
ԳՐԱՅԻՆ
ՓԱՌՍՏՈՆ**

Solent • Խաղանք • Վայելենք

**ԿԻՐԱԿԻ
ՅՈՒՆԻՍ 26**

10:00-Էն սկսեալ

Մար Միայել
Նոր Հաճոն փողոց
Հովանաւոր՝

almaz

Օճաղով ֆուլթայլ
Հաճով ուտելիքներ
Ձուրով խաղեր
Ժամանցային խաղեր
Տիկնիկ երաժշտութիւն
Օճաղով ֆուլթայլ
Հաճով ուտելիքներ
Ձուրով խաղեր
Ժամանցային խաղեր
Տիկնիկ երաժշտութիւն
Կրթական եւ աւելի
Մուտքը անվճար է
Ժամը 10:00-Էն սկսեալ
Մանրամասն քննադատ
76 587 256

**Հ.Կ.Բ.Մ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ
ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ**

Դարմանատուն բաց է ամէն օր առաւօտան ժամը 9:00-էն մինչեւ կէսօր, նոր ժամը 3:00
Բացի Կիւրակի օրերէն:

Ձեր ուշադրութեան կը յանձնենք նաեւ թէ դեղատեսակները բաց է նաեւ նոյն ժամերուն:

Երկուշաբթի

- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ

Երեքշաբթի

- Բժշ. Բրիա Հարպէտեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Ռաֆֆի Փոլատեան - Բեղձային հիւանդութիւններ
- Բժշ. Արամ Ձեւլալ - Ակնաբոյժ
- Կարօ Աւեսեան - Ֆիզիքական բուժում
- Բժշ. Մարալ Պոլեանեան - Հոգեբան

Չորեքշաբթի

- Բժշ. Յարութ Տէմիրճեան - Ուկրաբոյժ
- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
- Մարիլին Աուն - Սննդաբան

Հինգշաբթի

- Բժշ. Բրիա Հարպէտեան - Ատամնաբոյժ
- Կարօ Աւեսեան - Ֆիզիքական բուժում
- Բժշ. Իրինա Արքանեան - Ծնողաբերութեան եւ կանանց հիւանդութիւններ
- Բժշ. Միսակ Արքանեան - Վիրաբոյժ
- Բժշ. Մարալ Պոլեանեան - Հոգեբան

Ուրբաթ

- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
- Բժշ. Միսակ Արքանեան - Սրտաբան

Շաբաթ

- Բժշ. Միւրաճ Խօնէլյան - Բժշ. կոլորէր, ակնայ
- Բժշ. Էլի-Թօնի Բօրպանի - Ընդհանուր բժշկութիւն
- Բժշ. Բրիա Հարպէտեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ

@aebu.org @aebumedicosocialcenter 01 560 704 / 71 356 035

**Այս դժուար պահերուն, մեր
Դարմանատունը կը շարունակէ
կարիքաւորին կողքին կանգնիլ:
Այսօր մենք ձեր աջակցութեան
պէտք ունինք՝ մեր
առաքելութիւնը շարունակելու
համար:**

Կրնաք նուիրատուութիւն կատարել
Whish հաշիւով եւ օգնել մեզի որպէսզի
շարունակենք խնամք եւ անհրաժեշտ
ծառայութիւնները մատուցելու մեր գաղութին:

Իւրաքանչիւր ներդրում, ինքնապաշտօնային, կը
նպաստենք կը ծառայէ:

Միասին կրնանք յոյսը վառ պահել:

Whish MONEY 71/356035

Շնորհակարգին Ձեր ազ նուրբեան եւ օժանդակութեան
համար:
Միասին աւելի գորաւոր ենք:

**Կը տեղեկացնենք որ Մաշկաբան Միշել
Մաշկալի ձեզ կ'ընդունի ամէն
Երեքշաբթի ժամադրութեամբ:**

**We inform you that the Dermatologist
Michelle Maalouly will be available every
Tuesday by appointment.**

**نود إعلامكم بأن طبيب جلدية ميشال معلولي
يستقبلكم كل يوم الثلاثاء بموعد مسبق.**

CONTACT US

Պէրուս, Նոր Հաճոն, Ս. Գեորգ Եկեղեցի
بيروت، شارع أرمني، نور هاجين، كنيسة مار جرجس للأرمن الأثوذكس
01/560704 - 71/356035

www.araraddaily.com